ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2022 թվականի փետրվարի 8-ի, ժամը 14:00-ի նիստի
N 8 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միկրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով** («Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 21.12.2021, N 221 (7662)) համալսարանի միկրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Միքայել Սերգեյի Մելքումյանի** ռեկտորին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցող՝ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Ա.Հ.Սարգսյան:**

Զեկուցողը նշեց. «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2021 թվականի դեկտեմբերի 21-ի 221 (7662) համարում հայտարարվել է մրցույթ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միկրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչի** թափուր պաշտոնի համար, որին կարող են մասնակցել ամբիոնի մասնագիտական ուղղվածությանը համապատասխան գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան, պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում ունեցող անձինք: Միկրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով 2022 թվականի հունվարի 11-ին ռեկտորին դիմում է ներկայացրել միկրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Միքայել Սերգեյի Մելքումյանը:** Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգով» սահմանված պահանջներին համապատասխան ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը:

Մ.Ս.Մելքումյանը ծնվել է 1962 թվականի ապրիլի 1-ին Երևանում ծառայողի ընտանիքում: 1979 թվականին գերազանցությամբ ավարտել է Մ.Արազու անվան

թիվ 29 միջնակարգ դպրոցը: 1979-1983 թթ. սովորել և գերազանցության դիպլոմով ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի (ԵրԺՏԻ, ներկայում՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (ՀՊՏՀ)) պլանատնտեսագիտական ֆակուլտետը՝ «Արդյունաբերության պլանավորում» մասնագիտությամբ: 1983 թվականին ընդունվել է ԵրԺՏԻ ասպիրանտուրա «Տնտեսագիտություն, ժողովրդական տնտեսության (արդյունաբերություն) պլանավորում և կառավարման կազմակերպում» մասնագիտությամբ: 1983-1985 թթ. ծառայել է խորհրդային բանակում: Ծառայությունից հետո ուսումը շարունակել է ասպիրանտուրայում, որն ավարտել է 1987 թվականին:

Մ.Ս.Մելքումյանը 1987 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 1990 թվականին նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում: 1994, 1997-1998 թթ. վերապատրաստվել է Լիոնի առեւտրաարդյունաբերական պալատում և «Փարիզ-12» համալսարանում (Ֆրանսիա): 1998 թվականին Մ.Ս.Մելքումյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Ձեռնարկատիրության զարգացման և ներդրումային քաղաքականության կատարելագործման հիմնախնդիրները» թեմայով և ստացել տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան: 2002 թվականին նրան շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում:

Մ.Ս.Մելքումյանը 2000-2010 թթ. եղել է Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի 015 գիտական աստիճանաշնորհման մասնագիտական խորհրդի անդամ, իսկ 2010 թվականից առ այսօր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի 014 մասնագիտական խորհրդի անդամ է: Նա հրատարակել է 153 գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանք, այդ թվում՝ մենագրություններ, ուսումնական ձեռնարկներ, դասագիրք (20):

Մ.Ս.Մելքումյանի աշխատանքային գործունեությունը: 1987 թվականի սեպտեմբերի 1-ից առ այսօր աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում. նախ՝ 1987-1990 թթ.՝ ԵրԺՏԻ արդյունաբերական արտադրության կազմակերպման և պլանավորման (ապա՝ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման) ամբիոնում՝ ասիստենտ, 1990-2000 թթ.՝ դոցենտ, 2000-2009 թթ.՝ պրոֆեսոր, 27.08.2018-10.02.2010 թթ.՝ տնտեսական պատմության և իրավագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, 11.02.2010-02.07.2012 թթ.՝ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, 03.07.2012-02.07.2017 թթ.՝ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի վարիչ՝ մրցույթով անցնելու կապակցությամբ, 2017 թվականի հուլիսի

3-ից մինչ օրս՝ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման (ներկայում՝ միկրոէկոնոմիկայի) ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար: Մ.Ս.Մելքումյանը գիտամանկավարժական աշխատանքին զուգահեռ աշխատել է պետական կառավարման համակարգում: 1994-1995 թթ. եղել է ՀՀ Գերագույն խորհրդի տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովի փորձագետ: 1998-1999 թթ.՝ ՀՀ փոստի եւ հեռահաղորդակցության նախարարի խորհրդական: 1999-2000 թթ.՝ ՀՀ սոցիալական ապահովության նախարարության աշխատակազմի ղեկավար: 2000-2003 թթ. եղել է ՀՀ պետական գույքի կառավարման նախարարի տեղակալ: 2003-2004 թթ.՝ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ: 2012 թվականի մայիսին «Բարգավաճ Հայաստան» կուսակցության համամասնական ցուցակով ընտրվել է ՀՀ ԱԺ հինգերորդ գումարման պատգամավոր, 11.06.2012-19.06.2012 թթ.՝ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ, 19.06.2012-18.05.2017 թթ.՝ նույն հանձնաժողովի նախագահի տեղակալ: 2012-2018 թթ. եղել է Սևծովյան տնտեսական համագործակցության Խորհրդարանական Վեհաժողովի հայկական պատվիրակության անդամ, 2015-2017 թթ.՝ ՆԱՏՕ-ի ԽՎ-ում հայկական պատվիրակության անդամ, «Եվրանեսթ» ԽՎ-ում հայկական պատվիրակության անդամ: 2017 թվականին «Բարգավաճ Հայաստան» կուսակցության համամասնական ցուցակով ընտրվել է ՀՀ ԱԺ վեցերորդ գումարման պատգամավոր, ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ: 2017-2019 թթ. եղել է ԱԺ նախագահի տեղակալ՝ ՀՀ նոր Սահմանադրությամբ առաջին անգամ ընդդիմադիր ուժերի կողմից: 2018 թ. դեկտեմբերի 9-ին «Բարգավաճ Հայաստան» կուսակցության համապետական ընտրական ցուցակով ընտրվել ՀՀ ԱԺ յոթերորդ գումարման պատգամավոր: 2019 թ. հունվարի 18-ին ընտրվել է ՀՀ ԱԺ տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ: 2017-2020 թթ. եղել է ՀՀ ԱԺ խորհրդի անդամ, 2016-2021 թթ.՝ ԵԽԽՎ ԽՎ-ում հայկական պատվիրակության անդամ, ԵԽԽՎ ԽՎ-ում սոցիալական հարցերի կոմիտեի անդամ, ԵԽԽՎ ԽՎ-ում Եվրոպայի պահպանողականների և ռեֆորմիստների քաղաքական խմբի անդամ, 2017-2021 թթ.՝ համաշխարհային միջպառլամենտական միության ԽՎ-ում հայկական պատվիրակության անդամ, ՄԱԿ-ի հարցերի հանձնաժողովի անդամ: 2018-2021 թթ. եղել է «Հայաստան-Ղրղզստան», «Հայաստան-Իսլանդիա», «Հայաստան-Ինդոնեզիա», «Հայաստան-Մոնղոլիա» և այլ երկրների հետ միջպառլամենտական բարեկամական խմբերի նախագահ, 2012-2021 թթ.՝ «Հայաստան-Ռուսաստան» միջպառլամենտական հանձնաժողովի անդամ: 2015-2018 թթ. եղել է ՀՀ կառավարության հակակոռուպցիոն հանձնաժողովի անդամ: Ավելի քան 30 ընդունված օրենքների, ավելի քան 70 օրենսդրական նախագծերի հեղինակ է՝ հատկապես

կարևորելով ՀՀ հարկային օրենսգրքում հարկային բեռի տնտեսման վերաբերյալ, «Արդյունաբերական քաղաքականության մասին» և «Բանկային ավանդների մասին» իր կողմից մշակած և ընդունված օրենքները:

Մ.Ս.Մելքումյանը 2016 թվականի ՀՀ Նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Մխիթար Գոշ» մեդալով, 2019 թվականին ԵԱՏՄ բարձրագույն խորհրդի որոշմամբ՝ «Եվրասիական տնտեսական միության զարգացման գործում ունեցած ավանդի համար» մեդալով:

2021 թվականի հոկտեմբերից «Կենտրոն» հեռուստաընկերությունում վարում է «30 րոպե Միքայել Մելքումյանի հետ» հեղինակային հաղորդումը:

Ամուսնացած է, ունի չորս զավակ:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միկրոէկոնոմիկայի ամբիոնի 2022 թվականի հունվարի 26-ի նիստում (արձանագրություն N 6) քննարկվել է միկրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին դիմած հավակնորդ Մ.Ս.Մելքումյանի՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի» 14-րդ կետի համաձայն ներկայացրած ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագրի, հավակնորդի մասնագիտական բնութագրի, գիտամանկավարժական գործունեության արդյունքների և ամբիոնի վարիչի պաշտոնին հավակնորդի համապատասխանության մասին հարցը: Մ.Ս.Մելքումյանը ներկայացրել է միկրոէկոնոմիկայի ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը, դրա հիմնական դրույթները և նպատակը՝ նշելով, որ այն պետք է համահունչ լինի համալսարանի զարգացման տեսլականին, առաջիկա տարիներին ամբիոնի գիտահետազոտական աշխատանքների հիմնական վեկտորը պետք է ներառի ՀՀ կառավարության կողմից գերակա ճանաչվող ուղղությունների շուրջ հետազոտությունները, հետազոտական աշխատանքների անկյունքարը պետք է դիտարկել ՀՀ տնտեսության ճյուղային կառուցվածքում հնարավոր տեղաշարժերի կանխատեսումը և քարշակ ճյուղերի և արտադրությունների պետական աջակցության համալիր հիմնավորումը: Այնուհետև ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդի երաշխավորության մասին հարցը դրվել է ամբիոնի բաց քվեարկության: Քվեարկության արդյունքների հիման վրա (կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2) միկրոէկոնոմիկայի ամբիոնը երաշխավորել է Մ.Ս.Մելքումանի թեկնածությունը ներկայացնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ միկրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Հարցը քննարկվել է նաև գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նիստում, որտեղ բաց քվեարկության արդյունքների հիման վրա (կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) որոշվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միկրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչի

ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Միքայել Սերգեյի Մելքումյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ միկրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար

Զեկուցողից հետո Մ.Ս.Մելքումյանը ներկայացրեց միկրոէկոնոմիկայի ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գիտական խորհուրդը որոշեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միկրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Միքայել Սերգեյի Մելքումյանի թեկնածությունը դնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ միկրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 55, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսոր Դ.Գալոյանը, դոցենտ Մ.Բադալյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Հիմք ընդունելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2017 թվականի մարտի 17-ի նիստում (արձանագրություն N 7) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի 35-րդ կետը, միկրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի ընտրության նպատակով գիտական խորհրդի նիստում ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի N 1 արձանագրությունը և փակ գաղտնի քվեարկության արդյունքները (**կողմ՝ 54, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկ՝ 1**)՝ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միկրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնում համարել ընտրված տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Միքայել Սերգեյի Մելքումյանին**:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2022 թ. փետրվարի 8
Երևան

ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2022 թվականի փետրվարի 8-ի, ժամը 14:00-ի նիստի
N 8 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով** («Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 21.12.2021, N 221 (7662)) համալսարանի ասպիրանտուրայի բաժնի պետ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Եվգենյա Արայիկի Բազինյանի** ռեկտորին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցող՝ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Ա.Հ.Սարգսյան:**

Զեկուցողը նշեց. «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2021 թվականի դեկտեմբերի 21-ի 221 (7662) համարում հայտարարվել է մրցույթ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչի** թափուր պաշտոնի համար, որին կարող են մասնակցել ամբիոնի մասնագիտական ուղղվածությանը համապատասխան գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան, պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում ունեցող անձինք: Տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով 2022 թվականի հունվարի 4-ին ռեկտորին դիմում է ներկայացրել ասպիրանտուրայի բաժնի պետ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Եվգենյա Արայիկի Բազինյանը:** Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգով» սահմանված պահանջներին համապատասխան ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը:

Եվ.Ա.Բազինյանը ծնվել է 1982 թվականի հունիսի 12-ին Երևանում: 1999 թվականին գերազանց առաջադիմությամբ ավարտել է թիվ 153 միջնակարգ դպրոցը: 1999-2004 թթ. սովորել և գերազանցության դիպլոմով ավարտել է

Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի (ԵՊՏԻ, ներկայում՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (ՀՊՏՀ)) տնտեսագիտական կիբեռնետիկայի ֆակուլտետը՝ «Մաթեմատիկական մեթոդներ և գործառնությունների հետազոտություն տնեսագիտության մեջ» մասնագիտությամբ: 2004 թվականին ընդունվել է ԵՊՏԻ ասպիրանտուրա «Տնտեսագիտամաթեմատիկական մեթոդներ և մոդելավորում» մասնագիտությամբ:

Եվ.Ա.Բազինյանը 2016 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «ՀՀ ՀՆԱ-ի կանխատեսումը բայեսյան վեկտորային ավտոռեգրեսիոն մոդելների միջոցով» թեմայով և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2021 թվականին նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում: Նա հրատարակել է 17 գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանք (այդ թվում՝ 1 ուսումնական ձեռնարկ՝ համահեղինակությամբ, 1 դասախոսությունների նյութեր):

Եվ.Ա.Բազինյանի աշխատանքային գործունեությունը: 2005 թվականի սեպտեմբերի 1-ից առ այսօր աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում. նախ՝ 2005-2011 թթ.՝ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնում՝ դասախոս, 2011-2019 թթ.՝ ասիստենտ: 2019 թվականից սեպտեմբերի 9-ին Եվ.Ա.Բազինյանը նշանակվել է ասպիրանտուրայի բաժնի պետ, միաժամանակ համատեղությամբ՝ 0,50 դրույքով դասավանդելով ամբիոնում՝ նախ՝ 09.09.2019-01.07.2021 թթ.՝ ասիստենտ, իսկ 2021 թվականի սեպտեմբերի 1-ից՝ դոցենտ:

Եվ.Ա.Բազինյանը համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի փորձագիտական խորհրդի անդամ է, «Սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն» (ACSES) հոգաբարձուների խորհրդի անդամ: 2019 թվականի մինչ օրս համատեղությամբ աշխատում է Հայ-ռուսական համալսարանի տնտեսագիտության ամբիոնում՝ ավագ դասախոս, 2022 թվականից՝ Fast հիմնադրամի և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի համատեղ «Հաշվարկային գյուղատնտեսություն» (Computational Agriculture for Improved Food Systems and Resilient Policies in Armenia) թեմայով միջազգային հետազոտական գրանտի գլխավոր հետազոտող (senior researcher): Մասնակցել է մի շարք միջազգային հետազոտական ծրագրերի, միջազգային գիտաժողովների և սեմինարների, դասախոսություններով հանդես է եկել Կրակովի տնտեսագիտական համալսարանում (Լեհաստան), Աթենքի տնտեսագիտության և բիզնեսի համալսարանում (Հունաստան), Միշկոլցի համալսարանում (Հունգարիա):

Եվ.Ա.Բազինյանը ազատ տիրապետում է ռուսերենին և անգլերենին: Ամուսնացած է, ունի մեկ որդի և մեկ դուստր:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի 2022 թվականի հունվարի 26-ի նիստում (արձանագրություն N 6) քննարկվել է տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին դիմած հավակնորդ Եվ.Ա.Բազինյանի՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի» 14-րդ կետի համաձայն ներկայացրած ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագրի, հավակնորդի մասնագիտական բնութագրի, գիտամանկավարժական գործունեության արդյունքների և ամբիոնի վարիչի պաշտոնին հավակնորդի համապատասխանության մասին հարցը: Եվ.Ա.Բազինյանը ներկայացրել է տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը, դրա հիմնական դրույթները և նպատակը՝ նշելով, որ այն պետք է համահունչ լինի համալսարանի զարգացման տեսլականին, մատնանշել է ամբիոնի զարգացման հիմնական ուղղությունները՝ դասավանդման որակի բարձրացումը, դասավանդման նորագույն մեթոդների արմատավորումը, նորարարական կրթական տեխնոլոգիաների կիրառումը, դասընթացների և ծրագրերի մեթոդական ապահովվածության բարելավումը, ամբիոնի գիտական ուղղությունների հավասարակշռված զարգացումը գիտական, հետազոտական և կրթական նախագծերի իրականացման միջոցով, գիտական և գործարար համայնքի հետ համագործակցության խթանումը, ամբիոնի՝ որպես ոլորտային որակյալ մասնագետների պատրաստման կառույցի հեղինակության ամրապնդումը, ամբիոնի կադրային ներուժի կատարելագործումը, պրոֆեսորադասախոսական կազմի գիտական գործունեության և միջազգային շարժունակության ակտիվացումը և այլն: Այնուհետև ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդի երաշխավորության մասին հարցը դրվել է ամբիոնի բաց քվեարկությանը: Քվեարկության արդյունքների հիման վրա (կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1) տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնը երաշխավորել է Եվ.Ա.Բազինյանի թեկնածությունը ներկայացնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Հարցը քննարկվել է նաև գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նիստում, որտեղ բաց քվեարկության արդյունքների հիման վրա (կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) որոշվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ասպիրանտուրայի բաժնի պետ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Եվգենյա Արայիկի Բազինյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝

տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Զեկուցողից հետո Եվգենյա Արայիկի Բազինյանը ներկայացրեց տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գիտական խորհուրդը որոշեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ասպիրանտուրայի բաժնի պետ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Եվգենյա Արայիկի Բազինյանի թեկնածությունը դնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 55, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսոր Դ.Գալոյանը, դոցենտ Մ.Բաղալյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Հիմք ընդունելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2017 թվականի մարտի 17-ի նիստում (արձանագրություն N 7) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի 35-րդ կետը, տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի ընտրության նպատակով գիտական խորհրդի նիստում ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի N 2 արձանագրությունը և փակ գաղտնի քվեարկության արդյունքները (**կողմ՝ 54, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկ՝ 1**)՝ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչի թափուր պաշտոնում համարել ընտրված տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Եվգենյա Արայիկի Բազինյանին**:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2022 թ. փետրվարի 8
Երևան

ՔԱՂՎԱԾՔ
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2022 թվականի փետրվարի 8-ի, ժամը 14:00-ի նիստի
N 8 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով** («Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 21.12.2021, N 221 (7662)) համալսարանի տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Արմեն Յուրիկի Ղազարյանի** ռեկտորին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցող՝ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Ա.Հ.Սարգսյան:**

Զեկուցողը նշեց. «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2021 թվականի դեկտեմբերի 21-ի 221 (7662) համարում հայտարարվել է մրցույթ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի վարիչի** թափուր պաշտոնի համար, որին կարող են մասնակցել ամբիոնի մասնագիտական ուղղվածությանը համապատասխան գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան, պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում ունեցող անձինք: Տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով 2022 թվականի հունվարի 17-ին ռեկտորին դիմում է ներկայացրել ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Արմեն Յուրիկի Ղազարյանը:** Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգով» սահմանված պահանջներին համապատասխան ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը:

Ա.Յու.Ղազարյանը ծնվել է 1980 թվականի փետրվարի 7-ին Երևանում: 2002 թվականին ավարտել է Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանը՝ «Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն» մասնագիտությամբ՝ ստանալով ճարտարապետ-շինարարի որակավորում: 2011-2013 թթ. եղել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման տեղեկատվական համակարգերի ամբիոնի

հայցորդ՝ «Տնտեսագիտամաթեմատիկական մեթոդներ և մոդելավորում» մասնագիտությամբ:

Ա.Յու.Ղազարյանը 2013 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «ՀՀ ֆինանսական շուկաների անվտանգության ապահովումը նեյրոնային ցանցերի կիրառմամբ» թեմայով և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2018 թվականին նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում: Նա հրատարակել է 29 գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանք (այդ թվում՝ 4 ուսումնամեթոդական ձեռնարկ, որից 3-ը՝ համահեղինակությամբ, 1 կոլեկտիվ մենագրություն):

Ա.Յու.Ղազարյանի աշխատանքային գործունեությունը: 2001-2002 թթ. աշխատել է ՀՀ կառավարությանն առընթեր սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության կառուցվածքների սեյսմակայունության կենտրոնում՝ փորձարարական հետազոտություններ բաժնի 1-ին կարգի մասնագետ, 2003-2004 թթ.՝ Երևանի պետական համալսարանին առընթեր Ա. Շահինյանի անվան հատուկ դպրոցում՝ ինֆորմատիկայի կաբինետի ցանցային ադմինիստրատոր, 2004-2005 թթ.՝ Եվրասիա միջազգային համալսարանում՝ համակարգչային կենտրոնի ղեկավար և ինֆորմատիկայի դասախոս: 2005 թվականի սեպտեմբերի 10-ից առ այսօր աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում. նախ՝ 2005-2009 թթ.՝ ընդհանուր տնտեսագիտական ֆակուլտետում՝ դիսպետչեր, 2009-2010 թթ.՝ տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատավական համակարգերի ամբիոնում՝ դասախոս, 2010-2018 թթ.՝ ասիստենտ, 2018 թվականից՝ դոցենտ: 2020 թ. նոյեմբերի 2-ին նշանակվել է տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար:

Ա.Յու.Ղազարյանը վարում է հետևյալ դասընթացները՝ «Համակարգչային ցանցեր և ցանցային տեխնոլոգիաներ», «Տվյալների հավաքագրում և ներկայացում (Data Mining and Visualization)», «Համակարգչային գրաֆիկա», «Կառավարման տեղեկատվական համակարգեր», «Ինֆորմատիկան ֆինանսներում»: Վերջին 10 տարվա ընթացքում մասնակցել է միջազգային գիտաժողովների, սեմինարների և համաժողովների՝ ստանալով հավաստագրեր՝ (1. Международная научная конференция, «Из зоны бедствия в зону развития...уроки прошлого и вызовы времени», «Применение пакета SPSS для анализа и прогнозирования экономических показателей предприятия», Гюмри 2020: 2. Միջազգային գիտաժողով «Կրթության և գիտության հիմնախնդիրները», «Արհեստական բանականության մարտահրավերներն ու խնդիրները ֆինանսական շուկայում», Գյումրի 2021): Տիրապետում է ռուսերենին և անգլերենին:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի 2022 թվականի հունվարի 26-ի նիստում (արձանագրություն N 6) քննարկվել է տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին դիմած հավակնորդ Ա.Յու.Ղազարյանի՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի» 14-րդ կետի համաձայն

ներկայացրած ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագրի, հավակնորդի մասնագիտական բնութագրի, գիտամանկավարժական գործունեության արդյունքների և ամբիոնի վարիչի պաշտոնին հավակնորդի համապատասխանության մասին հարցը: Ա.Յու.Ղազարյանը ներկայացրել է տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը, դրա հիմնական դրույթները և նպատակը՝ նշելով, որ ամբիոնի բարեփոխման համար անհրաժեշտ է իրականացնել մասնագիտական կրթական ծրագրի բովանդակային և կառուցվածքային վերափոխում՝ աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխան: Անհրաժեշտ է բարելավել դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացները, մասնավորապես՝ կիրառելով և խրախուսելով նախագծերի հիման վրա ուսուցումը, անհրաժեշտ է վերանայել մասնագիտական կրթական դասընթացների առարկայացանկերը, կազմակերպել լրացուցիչ դասընթացներ, անհրաժեշտ է ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը ուսումնական գործընթացում, ներգրավել ուսանողներին համալսարանի տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի աշխատանքներում, ընդլայնել ուսումնաարտադրական փորձառություններ անցկացնող գործընկերների ցանկը և այլն: Այնուհետև ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդի երաշխավորության մասին հարցը դրվել է ամբիոնի բաց քվեարկությանը: Քվեարկության արդյունքների հիման վրա (կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1) տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնը երաշխավորել է Ա.Յու.Ղազարյանի թեկնածությունը ներկայացնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Հարցը քննարկվել է նաև գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նիստում, որտեղ բաց քվեարկության արդյունքների հիման վրա (կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) որոշվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Արմեն Յուրիկի Ղազարյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Զեկուցողից հետո Ա.Յու.Ղազարյանը ներկայացրեց տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գիտական խորհուրդը որոշեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Արմեն Յուրիկի Ղազարյանի թեկնածությունը դնել գիտական խորհրդի փակ գաղտնի

քվեարկությանը՝ տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 55, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսոր Դ.Գալոյանը, դոցենտ Մ.Բաղայանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Հիմք ընդունելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2017 թվականի մարտի 17-ի նիստում (արձանագրություն N 7) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի 35-րդ կետը, տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի ընտրության նպատակով գիտական խորհրդի նիստում ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի N 3 արձանագրությունը և փակ գաղտնի քվեարկության արդյունքները (**կողմ՝ 55, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկ՝ 0**)՝ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնում համարել ընտրված տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Արմեն Յուրիկի Ղազարյանին**:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2022 թ. փետրվարի 8
Երևան